հանդարտութեամբ, դիտելով կանաչազարդ շրջակայքը. ահա խոտով բարձած մի սայլ մեղմ ճռռոցով գլորւում է կանաչազարդ դաշտերի մէջ գծագրւող սպիտակ մեծ ճանապարհի վրայով դէպի գիւղը. չորս հաստավիզ եզներ քաշ են տալիս սայլը. մի 7—8 տարեկան երեխայ նստած է լծի վրայ և խարազանը (վարոց) ձեռքին քշում է. երեք հոգի շինականներ էլ քայլում են սայլի կողքից. նրանցից մինը զիլ ու ներդաշնակ ձայնով թուրքերէն բայաթի է կանչում։ Ճանապարհի մօտ, սիրուն կանաչազարդ մարգագետնի վրայ, այս ու՛ այն կողմն արածում են կովերը, երինջները, նրանք մերթ բարձրացնում են գլուխները, մի վայրկեան նայում անցնող ճանապարհորդներին, ապա կրկին շարունակում արածել, իսկ նրանց կողքին չոբանը, թաղիքից (նամադ) շինւած մեծ գլխարկը գլխին, մի սարի վրայ կանգնած, դիտում է երկնակամարը, կապուտակ ֆօնի վրայ երփներանգ նուրբ ամպերը, որոնք հսկայ կարաւան կազմած հանդարտ լողում են անհուն կապուտի վրայ։ Երբեմն, երբեմն փոքրիկ մասեր պոկւում, դուրս են ընկնում և լուծւում անհունութեան մէջ։ Շարունակում եմ ճանապարհս։ Բաւական հեռուն ժրաջան գիւղացիք մանդաղներով խոտ են հնձում, խուրձեր կապում և հաւաքում կալի մէջ։ Այնտեղ, արևելեան սարերի փէշին, մի բլրակի վրայ փռւած են գիւղի այգիները, որոնք իրենց նկարչական տեսքով գեղարւեստական մի պատկեր են ներկայացնում։ Բարձրանում եմ այդ բլրակը և կանգնած՝ նայում եմ դէպի հեռուն, դէպի նկարչական դաշտավայրերն ու ձորերը և ընդարձակ մարգագետինները, որոնք փռւած են առաջս իրենց սքանչելի տեսարաններով։ Ահա իրար յաջորդող լեռնաշղթաներ, բլուրներ, շարան-շարան ձորեր, որոնք բանաստեղծական անկարգութեամբ ցաք ու ցրիւ ցցւած են դիմացս՝ կարծես ճակատամարտ են մղելու։ Ահա սարերի կողքից մի քանի ձիաւոր լօռեր դուրս եկան, կանգնեցին մի քանի վայրկեան, նայեցին դէպի հեռուն և ապա ծածկւեցին ձորերի յետե-